

**О НЕКОТОРЫХ „СОМНИТЕЛЬНЫХ И НЕПРАВИЛЬНЫХ„ СЛОВАХ  
В „АРМЯНСКОМ СЛОВАРЕ„ ЕРЕМИИ МЕГРЕЦИ**

*В. Г. Амбарцумян*

В статье автор обращается к тем лингвистическим трудам, которые относятся к „Армянскому словарю„ Еремии Мегреци и в которых в той или иной мере рассматривается лексика упомянутого словаря и особенно имевшиеся в нем еще невыявленные и неэтимологизированные слова.

В данном ценном лексикографическом памятнике есть слова, имеющие исключительное значение с точки зрения истории исследования лексики армянского языка.

**ABOUT SOME "DOUBTFUL AND WRONG" WORDS THAT COME ACROSS IN THE DIC-  
TIONARY OF "BARGIRQ HAYOTS" BY EREMIIA MEGHRETSI**

*V. G. Hambardzumyan*

In the article the author took into consideration some linguistic works that in a way where the vocabulary of the above mentioned dictionary and some etymological words are observed. In this valuable monument of word examination there are some words that have unique impact in the study of the Armenian vocabulary.

**ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

**Թ. Ա. ԱՍՈՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ս. Սեբաստացու և նրա հիմնած միաբանության գործունեության նկատմամբ հայ հասարակական միտքը անտարբեր չի եղել: Կարծիքներ են արտահայտվել և գնահատականներ տրվել ինչպես միաբանության ամբողջ գործունեության, այնպես էլ մասնավոր հարցադրումների առիթով: Առաջ քաշված և լուսաբանված որոշ հարցեր այսօր ունեն միմիայն պատմական արժեք և էական նշանակություն չունեն միաբանության գործունեության գիտական գնահատման առումով, բայց «ապահովում են» երևույթի լուսաբանման համակողմանիությունը:

Արտահայտված կարծիքները միանշանակ չեն. կան և դրական, և բացասական գնահատականներ: Այստեղ հարկ ենք համարում գոնե համառոտակի ի մի բերել, մեկնաբանել դրանք՝ գիտակցաբար չանդրադառնալով Մխիթարյան հայրերի գրչին պատկանող ծավալուն ուսումնասիրություններին:

Մխիթարյանների գործի հանդեպ ծագած տարակարծությունները տարբեր մոտեցումների արդյունք են, որոնք մեծ մասամբ պայմանավորված են այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական առանձնահատկություններով կամ պարզապես սուբյեկտիվ ընկալման հետևանք են: Կարծում ենք, որ Մխիթարյաններն ըստ արժանվույն սկսում են գնահատվել 20-րդ դարի երկրորդ

կեսից՝ հատկապես կապված հայագիտության բնագավառում ունեցած ծեռքերունների հետ:

Մխիթարյաններին ներկայացնող և գնահատող առաջին հեղինակը Գ. Այվազովսկին է, որը եղել է միաբանության անդամ: Գիրքն ունի «Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» վերնագիրը: Ինչպես վերնագիրն է հուշում, Գ. Այվազովսկին վերլուծության նյութ է դարձրել Մխիթարյանների հոգևոր ուղղվածությունն ու կենսական սկզբունքները և ավելի շատ շոշափում է մարդկային-բարոյական խնդիրներ: Նրա կարծիքով՝ կաթոլիկությունը Մխիթարյանների համար սկզբում եղել է դիմակ՝ հայոց լուսավորության, մշակույթի զարգացման գործը անվտանգ ծավալելու նպատակով, սակայն հետագայում, երբ ընդունում են նոր սահմանադրություն, կաթոլիկությունը դիմակից վերածվում է էության:

Այդպես ժամանակի ընթացքում փոխվում է ոչ միայն միաբանության ոգին ու ընթացքը, այլև վարքը:

Այվազովսկին եղել է միաբանության անդամ և ի մոտո ծանոթ է նրա պահվածքին, այնպես որ դժվար է վիճարկել Մխիթարյանների վարքագծի վերաբերյալ նրա նկատառումները, և ի վերջո, այդպես էլ պետք է լիներ, որովհետև դժվար է երկար ժամանակ պահպանել ինքնուրույնությունը՝ վայելելով օտարի հովանավորությունը: Ժամանակը ցույց տվեց, որ Մխիթարյանները ավելի շատ կրթության, գիտության և մշակույթի անխոնջ մշակներ էին, որոնք նպատակադրվեցին և իրագործեցին ժողովրդին կրթելու գրեթե անլուծելի խնդիրը, քան կաթոլիկ քարոզիչներ: Իհարկե, եղել են ինչ-ինչ շեղումներ, սակայն դրանք, որքան էլ իրական, այնուամենայնիվ ընդհանուր պատկերը չեն փոխում:

Ի տարբերություն Գ. Այվազովսկու՝ ավելի լայն ընդգրկում ունի Մ. Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» աշխատությունը, որը մնացել է անավարտ: Բազմակողմանիորեն օժտված այս անհատականության հասարակական-քաղաքական պայքարը նպատակաուղղված էր ազգային առաջադիմությանը, ուստի պատահական չէ, որ ի շարս այլևայլ հարցերի՝ Մ. Նալբանդյանն անդրադարձել է նաև հայոց լեզվի հարցերին, գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերություններին, աշխարհաբարի կանոնավորման ուղիներին և այլն: Այս ամենի մասին նա խոսում է ոչ միայն վերը նշված աշխատանքում, այլ նաև մի քանի ուրիշ երկերում՝ հաճախ նշելով Մխիթարին և Մխիթարյաններին: Լինելով աշխարհաբարի ջերմ պաշտպան՝ Մ. Նալբանդյանը անողոքաբար է խոսում նրանց մասին, ովքեր պաշտպանում էին գրաբարը և ստեղծագործում գրաբարով: Այդ պատճառով էլ նրա քննադատությունը ուղղված էր նաև Մխիթարյաններին: Այնուամենայնիվ, Մխիթարյանների նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքը միանշանակ բացասական չէ, ավելի շուտ այն բավականին բարդ է ու հակասական: Բանն այն է, որ Մ. Նալբանդյանն իբրև չափանիշ միշտ աչքի առաջ ունի եվրոպական մշակույթը, որի բարձունքից հայկական միջավայրը երևում էր խիստ աղքատիկ: Ահա, Մխիթարյանների նկատմամբ նրա վերաբերմունքի բարդությունն ու հակասականությունը գալիս են այստեղից. հայ իրականության չափանիշներով Մխիթարյանների արածն իսկապես խիզախում էր, մինչդեռ եվրոպական չափանիշներով նրանց ստեղծածը քննադատության չի դիմանում:

Նախ՝ Մ. Նալբանդյանը բարձր է գնահատում Մ. Սեբաստացուն՝ ասելով, թե

հայկական դպրությունը վերստին բորբոքվեց այն կայծից, որ վառեց Մ. Սեբաստացին իր հանճարեղ մտքերի «ծննդականութեամբ»: Ըստ Մ. Նալբանդյանի՝ Մխիթարի հայրենասիրական ձգտումներից գերագույնն է եղել «հոգալ ազգի թե հոգևոր, թե իմացական պիտույքը», ապա եզրակացնում է, որ Մխիթարյանների շնորհիվ «եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը»: Չնայած այսպիսի գնահատականին՝ նա հետագայում արտահայտում է այնպիսի տեսակետներ, որոնք պատմականորեն չեն արդարացվում: Մխիթարյանների գործունեությունը դիտարկելով միայն հին դպրության սահմաններում՝ Նալբանդյանն ասելիքն ընդհանրացնում է հետևյալ կերպ. «Ընդհանուր լուսավորություն տարածել մեր ազգի մեջ նորա գործը չէր, և նա բոլորովին ապարդյուն գտնվեցավ» / Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1980, էջ 271/: Այնուհետև քննադատում և թերագնահատում է նրանց դպրոցների, ստեղծած գիտական և գրական արժեքների դերը հայ հասարակական կյանքում: Ակնհայտ թերագնահատում է, ուստի կարծում ենք՝ ճիշտ է գրականագետը, որ գրում է. «Տվյալ դեպքում Նալբանդյանին, որը կլանված է ժամանակի հրատապ հարցերով, դավաճանել է պատմականության՝ նրան հատուկ զգացումը» /Ս. Դարոնյան, Մ. Նալբանդյան. կյանքը և գործունեությունը, Երևան, 1979, էջ 113/: Մ. Նալբանդյանը անտեսում է նաև Մխիթարյանների ջանքը աշխարհաբարի մշակման, կանոնավորման և գործածության ոլորտներում՝ նրանց ներկայացնելով իբրև համոզված գրաբարամուլներ: Եվ պատահական չէ, որ իր քաղաքական բնույթի երկերում Մխիթարյանները հանդես են բերված իբրև հետադեմ գործիչներ:

Մխիթարյանների նկատմամբ համեմատաբար օբյեկտիվ և բարյացակամ վերաբերմունք է դրսևորում Ալ. Երիցյանը իր «Վեներտիկի Մխիթարյանք» գրքույկում: «Սբ. Ղազարու վանքը առաջինը եղաւ, որ ծանօթացրեց Եւրոպային հայագիտութեան հետ: Նա եղաւ, որ լոյս աշխարհի բերեց մոռացութեան տուած հայ ձեռագիրները, նա եղաւ, որ նպաստեց աշխարհաբարի առաջ գալուն, և, վերջապէս, նա եղաւ, որ վարժեցրեց հայերիս զիրք գնել, զիրք կարդալ, զիրք պահել», - գրում է նա /Ալ. Երիցյան, Վեներտիկի Մխիթարյանք, Թիֆլիս, 1883, էջ 34/:

Առանձին-առանձին արժևորելով Մխիթարյանների գիտական, գեղարվեստական ժառանգությունը՝ Երիցյանը այն եզրակացությանն է հանգում, որ վեներտիկցիների մատուցած ամենամեծ ծառայությունը ազգին «զլխավորապէս նրա լեզուագիտական աշխատութիւններն են», և անմիջապէս էլ վերապահում է անում, որ այդ բնագավառում նրանք գրեթե մեկ ամբողջ դար ետ են մնացել բուն լեզվագիտական զարգացումից, որովհետև ծանոթ չեն համեմատական լեզվաբանությանը, չեն ուսումնասիրել մի շարք կարևոր հին լեզուներ: Ելնելով սրանից՝ Ալ. Երիցյանը ասում է, որ «Սբ. Ղազարու վանքից դեպի մեզ տարածուած լոյսը առանց խաւար բծերի չէ»՝ սրա հետ կապելով նաև Մխիթարյանների կաթոլիկության խնդիրը, որ սկիզբ էր առել Գ. Այվազովսկուց: Քննադատական այսպիսի դիտողություններից հետո, այնուամենայնիվ, նա ընդունում է, որ «վեներտիկցիք իրենց ջանքով մեծապէս նպաստեցին հայկաբանութեանը», հատկապէս հայոց լեզվի ուսումնասիրությանը: Ալ. Երիցյանի առաջադրած որոշ հարցերի, հատկապէս որոնք վերաբերում են համեմատական լեզվաբանությանը, հին ու նոր լեզուների պատմական ուսումնասիրություններին, կարելի է մոտենալ վերապահությամբ՝ հաշվի առնելով լեզվաբանության զարգացման ընդհանուր մակար-

դակը տվյալ ժամանակաշրջանում:

Մխիթարյանների վերաբերյալ գրեթե նույն հարցերն է շոշափում նաև Լեոն: Վերջինիս ուսումնասիրության նյութը հայ տպագրության հարցերն են, և Մխիթարյանների գործունեությունն էլ ներկայացվում է այդ տեսանկյունից, սակայն զուգահեռ արտահայտում է իր տեսակետները նախորդ հեղինակների արձարժած հարցերի վերաբերյալ՝ շատ դեպքերում տալով ինքնատիպ պատասխաններ: Լեոն նրանց անվանում է «աննկուն տիտաններ», իսկ միաբանությունը համարում է հայերին լույս ու գիտություն մատակարարող միակ հիմնարկությունը:

Ինչ վերաբերում է Մխիթարյանների ճշմարիտ կաթոլիկ լինել-չլինելու հարցին, ապա նա պատասխանը ձևակերպում է հետևյալ կերպ. «ազգով՝ հայ, կրոնով՝ կաթոլիկ»: Կարծում ենք՝ ընդունելի տեսակետ է՝ նշելով, իհարկե, նրանց կաթոլիկության յուրահատուկ բնույթը. եթե նրանց ժամանակակից հայ կաթոլիկներից շատերը աննպաստ գործունեությամբ թշնամություն էին սերմանում մարդկանց միջև և պառակտում ազգը, ապա Մխիթարյանները կաթոլիկ եկեղեցու հովանավորությամբ աշխատում էին բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը և միասնությունը:

Լեոն Մխիթարյանների գիտական, գրական արտադրանքը գնահատում է արևմտաեվրոպական մշակույթի չափանիշներով, ճիշտ այնպես, ինչպես Մ. Նալբանդյանը իր ժամանակին:

Բնականաբար վերածնունդ ու լուսավորականություն տեսած ու ապրած եվրոպան այդ համեմատությունից պիտի շահեր, իսկ Մխիթարյանների արած գործը պիտի երևար հնացած, «ժամանակից ետ մնացած»: Ազգի կրթության գործը տնօրինում էր վանականությունը, իսկ դա Լեոն համարում է «հետադիմություն և դժբախտություն»: Ասվածը վերաբերում էր նաև Մխիթարյաններին: Լեոյի կարծիքով վանականությունը, այդ թվում նաև Մխիթարյան միաբանությունը, կարող էր ծաղկեցնել աստվածաբանությունը և լույս աշխարհի հանել միայն կրոնական բնույթի գրքեր: «Յետադեմ պահպանողականության» նշան էր համարում այն, որ միաբանությունը ընտրեց գրաբարը՝ իբրև գիտական, գրական գործունեության լեզու:

Լեոն այլ կարգի մեղադրանքներ էլ է ներկայացնում միաբանությանը, հաճախ՝ հանիրավի: Ըստ երևույթին, նրա անաչառ լինելուն խանգարել է **հարցի քաղաքականացումը**:

Մխիթարյանների գործունեությունը գնահատում է հասարակական-քաղաքական հոսանքների և նրանց գաղափարախոսությունների հաշվառմամբ, մի բան, որ նկատելի էր նաև Մ. Նալբանդյանի մոտ: Մինչդեռ պետք է ասել, որ քաղաքական պահպանողականությունը լուրջ խոչընդոտ չի եղել այդ միջավայրում հայագիտության և հայ մշակույթի զարգացման համար: Մասնավորապես գաղտնիք չէ, որ շատ հարցերում Մխիթարյանները եղել են նորարար առաջամարտիկներ:

Մխիթարյանների մասին Լեոյից հետո ամբողջական ուսումնասիրություններ երևան չեն եկել, սակայն հայերենագիտության հարցերին վերաբերող աշխատություններում, ըստ անհրաժեշտության, անդրադառնում են նաև նրանց: Մասնավորապես արժեքավորվում են այն աշխատանքները, որոնք վերաբերում են հայոց լեզվին: Դրանց անդրադարձել են Ա. Աբրահամյանը, Գ. Ջահուկյանը, Էդ.

Աղայանը, Յովի. Բարսեղյանը, Ռ. Իշխանյանը և շատ ուրիշներ:

Պետք է ասել, որ 20-րդ դարի 50-ական թվականներից սկսած՝ Մխիթարյան գործիչներին տրված գնահատականները ավելի օբյեկտիվ են ու անաչառ: Նկատելի է երևույթների մեջ խորանալու, դրանք պատմականորեն արժևորելու, տրված գնահատականները ճշգրտելու ձգտումը: Ծիշտ է՝ 30-50-ական թվականներին կատարված ուսումնասիրությունների վրա զգալի է կուսակցական գաղափարախոսության աննպաստ ազդեցությունը, սակայն հետագայում մեր հասարակական միտքը աստիճանաբար ազատագրվում է այդ ազդեցությունից և դառնում ավելի իրատես ու ճշմարտացի: Նման ազդեցության արդյունք է Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությանը նվիրված Ալ. Մարգարյանի ուսումնասիրությունը /տե՛ս Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Երևան, 1957/: Քաղաքական գաղափարախոսության ազդեցությունն այնքան ուժեղ է արտահայտված, որ հեղինակը, թերևս ակամա, խեղաթյուրում է Մխիթարյանների գործունեության հետ կապված որոշ փաստեր: Սրան նպաստում է նաև այն, որ նա անվերապահորեն ընդունում է Մ. Նալբանդյանի՝ շատ դեպքերում վիճելի և հակասական դատողությունները նրանց մասին: Այս կարգի թյուրիմացությունները բխում են 19-րդ դարի հայ հասարակական—քաղաքական միտքը հոսանքների բաժանելու և առաջադեմ ու հետադեմ գործիչներ տարբերակելու միտումից: Եվ քանի որ Մ. Նալբանդյանը հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ամենաաչքի ընկնող գործիչն է, ուստի անհարկի իդեալականացվում, գերազնահատվում է նրա գործունեությունը, մինչդեռ Մխիթարյաններինը՝ թերագնահատվում, որովհետև վերջիններս պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ են:

Այսպիսով, Մխիթարյանների գործունեության մասին շատերն են խոսել, բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել՝ հաճախ հակասական: Կամ իդեալականացրել են նրանց գործունեությունը, կամ Վեներտիկն ու Վիեննան համարել են «ռեակցիայի բույն»: Ինչևէ, Մխիթարյանների գործունեության գնահատման համար կարելի է առանձնացնել հարցադրումների հետևյալ խմբերը.

1. Մխիթարյանների կաթոլիկության հարցը,
2. Մխիթարյանների գիտագեղարվեստական ժառանգության գնահատման հարցը,
3. Մխիթարյանների և գրաբարի հարցը,
4. Մխիթարյանների և աշխարհաբարի հարցը:

Այս հարցերի որոշարկումը հնարավորություն կտա հնարավորինս ճիշտ գնահատել միաբանության գործունեությունը:

1. Մխիթարյանների կաթոլիկության վերաբերյալ հարցադրումն ըստ էության հնացել է և նրանց գործունեության գնահատման դեպքում գիտական նշանակություն ունենալ չի կարող: Այն առաջ է քաշվել 19-րդ դարի կեսերին, քննարկման նյութ դարձել Այվազովսկու, Նալբանդյանի, Երիցյանի և Լեոյի կողմից: Այնուհետև խնդիրը անուշադրության է մատնվել հետազոտողների կողմից և մեր ժամանակներում գիտական մակարդակով քննարկման նյութ չի կարող լինել: Մխիթարյանները կաթոլիկներ են, և այդ փաստը քննարկել, առավել ևս ժխտել, նրանց համարելով քողարկված լուսավորչականներ, անհիմն է: Նման հարցադրման հնարավորությունն առաջացել է այն տարբերությունից, որ նկատելի

եր Մխիթարյանների և կաթոլիկ միսիոներների պահվածքների միջև: Միաբանությունն առանձնակի ձգտում չէր ցուցաբերում կաթոլիկական պրոպագանդայի բնագավառում, աշխատում էր մեղմել լուսավորչական և կաթոլիկ հայերի միջև առաջացած հակասությունները / հատկապես Սեբաստացու արքայության ժամանակաշրջանում /: Մի փոքր խիստ դատելու դեպքում կարելի է նույնիսկ պնդել, որ Մխիթարյանների համար, հատկապես սկզբնական շրջանում, կրոնական ջերմեռանդությունը երկրորդ պլանում էր գտնվում: Այսպես, Սեբաստացու կենսագրության մեջ աչքի է զարնում մի կարևոր հանգամանք. դա նրա ուսումնաստենչությունն է: Կատարյալ ուսում ստանալու ձգտումն էր, որ նրան տարավ Սևան, Խոր Վիրապ, Էջմիածին և այլուր, դեռ երիտասարդ՝ նրան վստահում են ուսուցանել: Բայց հայկական միջավայրում, ուր տիրում էին խավարն ու տգիտությունը, նա այդպես էլ լիարժեք կրթություն չստացավ: Եվ բնական է, որ Յոնում ծաղկող գիտությունների մասին լուրերը նրան պիտի տանեին այդ ճանապարհով: Մյուս կարևոր հանգամանքը միաբանություն հիմնելու գաղափարն ու նրա նպատակների որոշարկումն էր. Մխիթարն ու իր միաբանությունը պիտի պայքարեին տգիտության և խավարի դեմ, այսինքն՝ Մխիթարի և նրա հիմնադրած միաբանության գերխնդիրը գիտության, կրթության, մշակույթի զարգացնելն էր հայոց մեջ, որի մի մասնավոր արտահայտությունը պետք է լիներ մարդկանց կրոնական և բարոյական դաստիարակությունը: Հայկական միջավայրում նման նպատակներ հետապնդող միաբանության ստեղծումը պարզապես անհնարին էր: Մխիթարը այդպիսի փորձեր կատարել էր և անձամբ համոզվել դրանում: Նրանք ընդունեցին կաթոլիկությունը և համբերատարությամբ, անասելի դժվարություններ հաղթահարելով, ձեռնամուխ եղան իրեց գերխնդրի իրագործմանը:

2. Մխիթարյանների գիտական, գեղարվեստական, մշակութային ժառանգությունը գնահատելիս անհրաժեշտ է ճշտել ելակետերն ու չափանիշները, այլապես կարելի է ընկնել ծայրահեղությունների մեջ: Ցանկացած անհատի կամ կազմակերպության ծավալած գործունեությունը արժևորվում է ժողովրդի պատմության համապատասխան օղակում խաղացած դերով: Այս տեսակետից անժխտելի է, որ Մխիթարյանների ստեղծած գիտամշակութային ժառանգությունը մեր մտավոր զարգացման մեջ նշանավորում էր մի նոր աստիճան՝ իր առավելություններով և թերություններով հանդերձ: Կրոնական բնույթի գրականություն Մխիթարյանները ավելի շատ են հրատարակել, քան այլ բնույթի, բայց նրանք հեղինակել և հրատարակել են նաև այնպիսի գրքեր, որոնք խոշոր նշանակություն են ունեցել հասարակության մտավոր զարգացման շղթայում: Նրանք առաջինն էին հայ մատենագրության վերածննդի, աշխարհաբարի քերականության և աշխարհաբար գրքերի ստեղծման, գիտական բառարանագրության, գրաբարի մաքրման, աշխարհաբար թատրոնի զարգացման, գիտական պատմագրության ստեղծման, թարգմանության և այլ բնագավառներում: Եվ, ի վերջո, անժխտելի է, «որ այս բառարանը /խոսքը ՆՅԲ-ի մասին է/ և գիտական ուրիշ գրքեր՝ բնության, աշխարհագրության և պատմագրության մասին հարուստ նյութ են տվել ժամանակի քաղաքական գործիչներին, հրապարակախոսներին, մտածողներին, լուսավորիչներին: ...Մխիթարյանները և, առհասարակ, կլասիցիստները բացեցին պատուհան դեպի Եվրոպա՝ թարգմանելով բազմաթիվ գե-

ղարվեստական ու գիտական երկեր, որոնք, անշուշտ, նպաստում էին քաղաքակրթության ընթացքին»,- գրում է Յր. Թամրազյանը /Յր. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Գ, Երևան, 1992, էջ 16 /:

Ավելացնենք, որ Մխիթարյանների տքնաջան գործունեության շնորհիվ էր նախապատրաստվել այն աստիճանը, որով բարձրացավ 19-րդ դարի 50-60-ական թվականների հայ մտավոր զարգացման նոր ալիքը:

Բոլորովին այլ բան է, երբ հայ իրականության մեջ տեղի ունեցող այս փոփոխությունները կողք կողքի են դնում արևմտաեվրոպական իրողությունների հետ և փորձում են նմանություններ հայտնաբերել երկու տարբեր պատմական զարգացումների միջև: Համաշխարհային զարգացումը ենթադրում է ազգերի զարգացման ընդհանուր օրինաչափությունների գոյություն, բայց դրանց հայտնաբերումն անհրաժեշտ է կատարել զգուշորեն՝ հաշվի առնելով հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիտամշակութային զարգացման ազգային յուրահատկությունները: Ազգերի զարգացումը հավասարաչափ և համընթաց տեղի չի ունենում, ուստի կարելի է խոսել զարգացման բարձր ու ցածր աստիճանների մասին և ոչ թե «բարձրի» բարձրությունից մյուսը համարել հետադիմություն: Մ. Նալբանդյանի, Լեոյի, մասամբ Ալ. Երիցյանի մեխանիկական համադրումը հանգեցրել է այդ արդյունքին, ընդ որում, համադրելիս նրանք մեծ լուսավորիչների գրքերի կողքին դնում են Մխիթարյանների կրոնական բնույթի գրքերն ու թարգմանությունները:

Հայ ժողովուրդն ապրում էր յուրահատուկ պատմական պայմաններում: Կիլիկյան թագավորության անկումից հետո, կորցնելով պետականությունը, ընկավ այլոց գերիշխանության տակ, և դա խիստ անդրադարձավ նրա մտավոր զարգացման վրա: Ուրեմն պատմականորեն պետք է լցվեր զարգացման շուրջ չորսդարյա բացը, ժողովուրդը պիտի հասկանար և իմաստավորեր անցյալը: Ահա թե ինչու 17-18-րդ, նույնիսկ 19-րդ դարերի գործիչների թե գաղափարներում, թե գործունեության մեջ այս կամ այն չափով արտահայտվում են գծեր, որոնք անվանում ենք պահպանողական: Հնի ու նորի գիրկընդխառն ընթանալու մասին է փաստում Յր. Թամրազյանը՝ գրելով. «Մեր կլասիցիստները, ռոմանտիկները, անգամ ռեալիստները աշխատում էին կողք կողքի: ...Մեզանում դարերը խառնվել էին իրար» /նույն տեղում՝ էջ 24/: Արձանագրելով այս փաստը՝ Յր. Թամրազյանն այն անվանում է տարօրինակ, մինչդեռ տարօրինակ ոչինչ չկա. նորի հետ լցվում էր նաև այն բացը, որ գոյացել էր 14-րդ դարի վերջերից մինչև 18-րդ դարը:

3. Մխիթարյաններին շատ են մեղադրել գրաբարամոլության՝ գրաբարը վերակենդանացնելու և վերստին հաղորդակցման լեզու դարձնելու ձգտման մեջ և նրանց գործունեությունն էլ սահմանափակում են այդ շրջանակներում: Այս տեսակետները ոչ միայն ճիշտ չեն ներկայացնում իրողությունը, այլև հակապատմական են: Այժմ ուզում ենք մի քանի դիտողություններ անել առաջադրված հարցադրման առիթով՝ փորձելով ճշգրտել Մխիթարյանների վերաբերմունքը գրաբարի նկատմամբ:

Գրաբարամոլության մեջ Մխիթարյաններին մեղադրելու հարցում հիմնական դեր խաղացել են հետևյալ հանգամանքները.

ա/ հայ մատենագրության վերակենդանացման համար գրաբարը աղավա-

ղումներից մաքրելու և նախկին տեսքին բերելու համար ներդրած ջանքն ու եռանդը,

բ/ դրվատական ու հիացական վերաբերմունքը գրաբարի մշակվածության, ճոխության, գեղեցկության և կանոնավոր բնույթի նկատմամբ,

գ/ գրաբարով գիտական, գեղարվեստական, կրոնական բնույթի մեծ քանակությամբ գրքեր հեղինակելը:

Արդյո՞ք, ելնելով նշված հանգամանքներից, կարելի է Մխիթարյաններին համարել գրաբարամուլներ: Իհարկե՝ ոչ, և ահա թե ինչու:

17-18-րդ դարերը համարվում են ազգային զարթոնքի ժամանակաշրջան: 18-րդ դարում բարձրանում է նաև ազգային ինքնագիտակցության մակարդակը: Պետականություն չունեցող հայ ժողովրդի մեջ սկսում են ձևավորվել ազգային ազատագրության գաղափարները, և հենց այդ շրջանում է ամբողջանում ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանությունը, որը 19-րդ դարի առաջին կեսից արտահայտվում է նաև գործնականորեն՝ զինված ապստամբություններն ու պայքարը թուրքական իշխանությունների դեմ, որը հանգեցրեց 1860թ. Սահմանադրության ընդունմանը արևմտահայոց մեջ: Հայ ժողովրդի հայրենասիրական զգացումների ձևավորումը միշտ էլ մեր մտավորականությունը մեծ մասով պայմանավորել է մեր հերոսական անցյալի հերոսական գործերի ու գործիչների դրվատմամբ: Մեր նախնիների հերոսական-հայրենասիրական վարքը միշտ է ոգևորել և պայքարի մղել հայ ժողովրդին դժվարին ժամանակաշրջաններում: Ահա, Մխիթարյանների նպատակը սոսկ գրաբարը մաքրելն ու վերակենդանացնելը չէր, երբ իրար հետևից հրատարակում էին մեր պատմիչների գրքերը, այլ դրանով նրանք իրենց ժամանակակիցներին կապում էին սեփական պատմության հետ՝ շատ լավ հասկանալով, որ լավագույն ուսուցիչը ցանկացած ազգի համար իր պատմությունն է: Ով կարող է պնդել, թե Մխիթարյանների եռանդուն գործունեությունն այդ ուղղությամբ հայրենասիրություն չէ և չի նպաստել հայրենասիրական զգացումների շիկացմանը մեր ժողովրդի մեջ: Եվ բնական է, որ գրաբար հորինված ստեղծագործությունները գրաբար էլ հրատարակվեին: Դրանց աշխարհաբար թարգմանությունները 19-րդ դարի վերջի իրողություններն են, որոնց գաղափարը /աշխարհաբար թարգմանելու գաղափարը- Թ.Ա./ 18-րդ դարում դեռևս հասունացած չէր պարզապես: Դրանց հրատարակության ընթացքում Մխիթարյանները բախվեցին մի մեծ դժվարության. ժամանակի ընթացքում գրաբարը փոփոխությունների էր ենթարկվել, իսկ Մխիթարյանների ժամանակ լատինաբան հեղինակները այն կամայականորեն ձևում էին ըստ լատիներենի: Անհրաժեշտ էր մանրակրկիտ աշխատանք տանել ձեռագրերը համեմատելու և տեքստերը նախկին տեսքին բերելու ուղղությամբ: Ահա թե ինչու Մխիթարյանները ինքնամոռաց տրվեցին գրաբարը «վերակենդանացնելու» ծանր աշխատանքին: Ուրեմն, գրաբարի ուսումնասիրությունը Մխիթարյանների կողմից գալիս էր ոչ թե «գրաբարամոլությունից», այլ այն ժամանակի պահանջն էր, որի իրագործմանը ձեռնամուխ եղան նաև ուրիշները: Գրաբարամոլություն չպետք է համարել նաև այն հիացական արտահայտությունները, որ անում են Մխիթարյանները գրաբարի մասին: Այդպիսի արտահայտություններ արվում են նաև այսօր, քանի որ, իսկապես, գրաբարը գեղեցիկ, հնչեղ, ճոխ ու ձևավորված լեզվաորակ է: Ուստի միանգամայն հասկանալի պիտի լինի այն ավստոսանքը, որ արտահայտում են Մխիթարյանները գրաբարի անհասկանալի լինելու համար:



Իբրև ապացույց գրաբարանդության՝ հաճախ է շահարկվում այն փաստը, որ Մխիթարյաններից շատերը աշխարհաբարը համարում են դուռ, միջոց՝ գրաբարը սովորելու համար: Այստեղից ենթադրում են, որ Մխիթարյանները նպատակ են ունեցել աշխարհաբարի միջոցով գրաբարին վերադառնալու: Այո, Մխիթարյանները իրենց աշակերտներին առաջարկել են աշխարհաբարի օգնությամբ յուրացնել գրաբարը, նույնիսկ աշխարհաբար բացատրություններով գրել են գրաբարի քերականություններ, բայց մեր կատարած ուսումնասիրություններից ելնելով՝ համոզված ենք, որ խոսքը գնում է միայն գրաբարը սովորելու, յուրացնելու և ոչ թե դեպի գրաբար ետդարձի մասին: Չէ՞ որ առանց գրաբարի իմացության ժողովուրդը լիարժեք կապ չէր ունենա իր պատմամշակութային անցյալի հետ: Իհարկե, Մխիթարյանների մեջ կային մարդիկ, հայտնի դեմքեր, ինչպես, ասենք, Ա. Բագրատունին, որոնք իսկապես քարոզում էին գրաբարը դարձնել գրականության լեզու, բայց այդ հատուկեմտ երևութները, ինչքան էլ մեծ լինեն դրանք, չեն ազդում ընդհանուր ուղղվածության վրա, մանավանդ, երբ գործ ունենք արդեն ուշացած երևույթների հետ:

Իրականությունն այն է, որ Մխիթարյանները ստեղծագործել են և գրաբար, և աշխարհաբար՝ ժամանակի առաջացման հետ հետզհետե ավելացնելով աշխարհաբար գրականության ծավալը: Բազմաթիվ վկայություններ կարող ենք բերել Մխիթարյանների աշխատություններից, ուր նրանք փաստում են գրաբարի անհասկանալի դառնալն ու աշխարհաբարի մշակման անհրաժեշտությունը, իսկ այդքանից հետո խոսել դեպի գրաբար նրանց ետդարձի մասին, կլինի ավելորդ:

Մխիթարյանները հրատարակեցին բազմաթիվ գրքեր, հատկապես կրոնական բնույթի, որոնք, բնականաբար, բովանդակային-գաղափարական առումով քննության չեն դիմանում և անարժեք են: Մինչև օրս էլ այդպես էլ գնահատում են, մինչդեռ հենց կրոնական բնույթ ունեցող գրականության մի մասը խիստ արժեքավոր է լեզվական տեսակետից: Մ. Սեբաստացուց սկսած՝ Մխիթարյանները իրենց կրոնական արտադրանքի մի մասը հրատարակում էին աշխարհաբարով, որոնց թիվը գնալով ժամանակի ընթացքում ավելանում էր: Դրանք, ինչպես նաև այլ բնույթի աշխարհաբար գրքերը, անգնահատելի են արևմտահայերենի ուսումնասիրության համար: Նրանք արևմտահայ իրականության մեջ առաջիններից էին, որ կազմեցին արևմտահայերենի առաջին քերականությունը և գրեցին գրքեր՝ այդպիսով դառնալով ռահվիրա արևմտահայերենը գրքի լեզու դարձնելու գործընթացում: Մխալվում են այն ուսումնասիրողները, որոնք ասում են, թե Մխիթարյանները հիացած ու տարված գրաբարով, խոչընդոտում էին աշխարհաբարի զարգացմանը /Լեո/: Ճիշտ հակառակը: Նախ՝ Մխիթարյաններին է պատկանում գրականության, գիտության, թատրոնի, մանուկի բնագավառներում աշխարհաբարի մուծման առաջնությունը, երկրորդ՝ ցույց տալով աշխարհաբարի անկազմակերպ բնույթը՝ առաջարկել ու աշխատել են կանոնավորել այն, երրորդ՝ հասկացել և առանց ցավագին ընկալումների ընդունել են գրաբարի անհասկանալի դառնալու և աշխարհաբարի՝ գրականության մեջ մտնելու պատմական փաստը: Գրաբարին զարկ տալը չխանգարեց նրանց նույնն անել նաև աշխարհաբարում: Սկզբնական շրջանում նկատելի հակվածությունը դեպի գրաբար ինչ-որ տեղ պայմանավորված էր նաև աշխարհաբարի իսկապես ան-

կազմակերպ բնույթով և միասնական ու ընդհանուր լեզվական նորմաների բացակայությամբ:

19-րդ դարի 50-60-ական թվականներին, երբ գրաբար, թե աշխարհաբար հարցադրումը հասել էր գերագույն լարվածության, Մխիթարյանները հարցը լուծում էին վերջինիս օգտին, միաժամանակ խորհուրդ էին տալիս բռնի փոփոխություններ ու նորանուծություններ չանել աշխարհաբարի քերականական համակարգում: «Աշխարհաբար լեզուի մասին կաճառն թեև միաձայն և վճռական կարծիք չէ յայտնած, սակայն դեկտեմբերի 19-ի գումարման մեջ կաճառականաց մեծագոյն մասն այս կէտս կըպնդէր՝ թէ բացի արտաքսմանէ այլազգի կամ օտար բառից և ածանցներու՝ ոչ հոլովներու և ոչ ալ բայերու լծորդութեանց, վասն զի այդ և նման տարօրինակութիւնները բնական ու կանոնաւոր ընթացքով եղած են, և անոր համար ալ իբր սեպիական կանոններ կընկատուին: ...թողլու է ժամանակին՝ որ գործէ և կատարելագործէ աշխարհիկ բարբառը», - այս մեջբերումը կատարված է 1849թ. կաճառականների նիստի արձանագրությունից:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1958:
2. **Աճեմյան Վ.**, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971:
3. **Այվազեան Գ.**, Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վեներտիկոյ, Փարիզ, 1857:
4. **Դարոնյան Ս.**, Միքայել Նալբանդյան, Երևան, 1979:
5. **Երիցեան Ալ.**, Վեներտիկի Մխիթարեանք, Թիֆլիս, 1883:
6. **Թամրազյան Հր.**, Հայ քննադատություն, հտ. Գ, Երևան, 1992:
7. **Լեո.**, Երկերի ժողովածու, հտ. 5, Երևան, 1986:
8. **Ջահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն /17-19-րդ դդ./, Երևան, 1874:
9. **Սարգսիսյան Բ.**, Երկհարելրամեայ գրականական գործունեություն և նշանաւոր գործիչներ Վեներտիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վեներտիկ, 1905:

#### К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ДЕЯТЕЛЬНОСТИ МХИТАРИСТОВ

*T. A. Асоян*

Многие обращались к деятельности мхитаристов. Даны противоречивые оценки. Даже такие авторитетные мыслители, как М. Налбандян и Лео, не дали однозначного ответа на данный вопрос. Из выдвинутых вопросов можно выделить вопросы религиозной принадлежности мхитаристов, отношение к грабару и ашхарабару. Исследования показывают, что мхитаристы сыграли особо важную роль в арменоведении, и не оценим их вклад именно в этой сфере.

#### THE PROBLEM OF MKHITARIST'S ACTIVITIES ESTIMATION

*T. A. Asoyan*

The activities of Mkhitarists have been much discussed. Even such authorized writers as M. Nalbandyan and Leo, did not have any certain answer to that question. Among the questions arised, one

can underline the question of the religious affiliation of Mkhitarists, and their concern to grabar (old Armenian) and ashkharabar (new Armenian).

Mkhitarists played an important role in the study of Armenology.

## **ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 18-ՐԴ Դ.- 19-ՐԴ ԴԱՐԻ 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Մխիթարյանների փորձը)**

**Թ. Ա. ԱՍՈՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Մխիթարյան միաբանությունը՝ իբրև կրոնական և գիտամշակութային կազմակերպություն, նշանակալի հետք է թողել ընդհանրապես հայ մշակույթի պատմության մեջ, կազմակերպություն, որն այսօր էլ, գուցե ոչ նախկին ինտենսիվությամբ և հզորությամբ, շարունակում է հոգալ հայ ժողովրդի «հոգևոր, բարոյական և մտավոր կարիքները», ինչպես ձևակերպել են իրենք՝ Մխիթարյանները: Հայ հասարակական միտքն էլ անտարբեր չի եղել և միշտ գնահատել է միաբանության գործունեությունը թե իբրև զուտ հայկական երևույթ, թե իբրև եվրոպական մշակույթի բաղադրիչ: Ջարմանալի է, սակայն, որ տրված գնահատականը միանշանակ չէ: Միաբանության մշակութային-հայագիտական գործունեությունը և գրական ու գիտական արտադրանքը մեկ համարվել է նվաճում, մշակութային վերելքի արտահայտություն, մեկ՝ հետադիմություն, ուշացած երևույթ: Երևույթն այդպես են գնահատել այնպիսի հայտնի մտավորականներ, ինչպիսիք են Մ. Նալբանդյանը և Լեոն: Երկուսն էլ վարվել են նույն կերպ. իբրև զուտ հայկական երևույթ՝ Մխիթարյանների արածն ու ստեղծածը նվաճում է, իսկ եվրոպական մշակույթի համեմատությամբ՝ հետադիմություն, ուշացած երևույթ:

Առավել զարմանալի է այն, որ բարձր գնահատելով Մխիթարյանների հեղինակած այս կամ այն աշխատությունը՝ միաբանության գործունեությունն ընդհանրապես համարել են հետադիմական ու «ռեակցիոն» նույնիսկ 20-րդ դարի 2-րդ կեսին: Հանիրավի քննադատական վերաբերմունքն ավելի ցայտուն ու մերկապարանոց է արտահայտվել, երբ Մխիթարյաններին վերաբերող հարցերին մոտեցել են որոշակի քաղաքական նկատառումներով:

Մխիթարյանները ասպարեզ իջան 18-րդ դարի արշալույսին: Մխիթարի և միաբանության գերխնդիրն էր հայոց մեջ գիտությունների և մշակույթի զարգացումը: Պատմականորեն իրենց վերապահված այդ առաքելությունը նրանք իրականացրին հայրենիքից դուրս՝ հաղթահարելով բազում դժվարություններ, անցնելով տառապանքների և փորձությունների միջով: Նրանց ուշադրության կենտրոնում եղել է հայոց լեզուն, և այդ բնագավառում նրանք հասան նկատելի հաջողությունների. գրեցին ու կազմեցին քերականություններ, բառարաններ, զբաղվեցին գրաբարի մաքրմամբ և մատենագրական հուշարձանների հրատարակմամբ: Եվ էլի, չգիտես ինչու, նրանց գործունեությունը հիմնականում գնահատ-